ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2023 թվականի N 587-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 1025-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 1025-Ն որոշման N 5 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի հարցաշարը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) հավելվածում «**1.** ՀՀ կառավարության 22.12.2005 թ. «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշում. **2.** ՀՀ կառավարության 29.10.2004 թ. «Գազի տնտեսությու-

նում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1843-Ն որոշում» բառերը փոխարինել «1. ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Գազաբաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները հաստատելու մասին» N 539-Ն որոշում» բառերով.

3) հավելվածի N 2 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

ԷՀԳ-ի	լարումը՝ կՎ	L, մ	լարումը՝ կՎ	L, մ
Մինչև	1	1	220	5
	20	3	330	6
	35-110	4	400	6,5
	150	4,5	500	6,5

».

4) հավելվածը N 3 աղյուսակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին և 2-րդ կետերով՝

«1. Մալուխի (լարերի) և գազատարի փոխհատումը (կետ 2 և 5) առանց արանքի թույլատրվում է կապի կամ լարային հաղորդակցման մալուխը (լարերը) էլեկտրամեկուսիչ նյութից (ռետին, էբոնիտ, պոլիէթիլեն և այլն) պատրաստված և գազատարի եզրերից առնվազն 0.1 մ ցցված խողովակի մեջ անցկացնելու պայմաններում:

2. Կցորդիչների առկայության դեպքում զուգահեռ անցկացման (կետ 5) հեռավորությունը պետք է ավելացվի մինչև 0.5 մ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ